

ամենայն ինչ կատարելութեան վերջին ծայր հասած են. տպագրատունն՝ նորակառոյց հաշգին շինուածք մ'է:

Սյէկնտէրտը թերեւս այժմեան անգղիական լրագրաց մէջ ամենէն աւելի հաստատունն է. և կրնանք ըսել թէ լոնտրայի առաւօտեան արժանագին թերթոց պարագլուխն. և իւր արտաքին վայելուչ տեսքը, ազնիւ թուղթը և անսխալ շարադրուած թիւնը՝ իւր ուղղութեան լաւութիւնն և կարգադրութիւնը կը ցուցնեն: Գործի տէր մարդկանց նախամեծար թերթն է սա, թէպէտ իւր տնտեսական և դրամական կարծիք շատ գնահատեալ չեն 'ի Սակարանն: Յաջող և մեծ նախանձորդ մ'ալ ունի (Մորնիկ-ֆոսդ) որ շատ աւելի գիւրութեամբ կը տարածուի քաղաքին մեծամեծ ակմրոց մէջ: Սյէկնտէրտ և Մորնիկ փոսդ՝ պահպանողական կուսակցութեան ամենէն նշանաւոր գործիչներն են. յետինս՝ աւելի հին պահպանողականաց կողմն է, որ ցարդ ևս բաւական զօրաւոր կուսակցութիւն մը կը կազմէ: Սյէկնտէրտ ալ իւր բաժնին մէջ անգղիական ազգային կենաց հաւատարիմ՝ ներկայացուցիչն է, 1827ին հիմնուած. զանազան վիճակներէ անցնելէ և տիրոջը սնանկութենէն վերջը՝ 1857ին Պ. Ճոնսթըն գնեց զայն ուրիշ նմանօրինակ ուղղութեան ունեցող թերթի մը հետ (Մորնիկ Հէրալտ): Պ Ճոնսթըն գործունեայ անձ մ'ըլլալով՝ երկու թերթերն ալ միացուց. Սյէկնտէրտը առաւօտեան լրագիր բրաւ, գինն ինչեցուց և ծաւալը կրկնապատկեց. Հնդկաստանի հռչակաւոր ապստամբութեան ժամանակն էր: Պ. Ճոնսթըն 1878ին վախճանեցաւ. բայց մեռնելէն առաջ յուղղութիւն իւր թերթին արժանաւոր անձ մը գտեր էր, զՊ. Մըաֆորտ. իւր տուած ուղղութեան շնորհիւ՝ կրնայ և կը մրցի միւս առաւօտեան մեծամեծ լրագրաց հետ: Սյէկնտէրտի ճարտարագոյն և յաջողագոյն աշխատակցաց մին է նշանաւոր բանաստեղծն և քաղաքագէտն Ալփրետ Օսդէն:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ազդեցութիւնը կենդանեաց վրայ: — Թէ՛ ձիերն և թէ շուները՝ երաժշտական լաւ ականջ ունին. մանաւանդ եղած են շուներ, որ տխուր և զգայուն անցքերու՝ ողբական ձայներ կը հանէին, իսկ զուարթ կտորներ լսած ժամանակ՝ ուրախութեամբ կը հաջէին և զարնողին ձեռքը կ'երթային լզելու՝ կարծես նոյն անցքին կրկնութիւնը թախանձե-

լով, Բսա Արխտոստելի՝ ձիերը ամէն գործիքէ աւելի սրինդը կ'ախորժին։ Սիւսերեանք իրենց ձիոց երաժշտական ամանակով պարել կը սորվեցնէին։ տակայն այս հաճոյքը՝ պատերազմի ժամանակ իրենց մեծ ձախորդութեան պատճառ կ'ըլլար։ Վասն զի երբ կը պատրաստուէին թշնամեաց վրայ յարձակելու՝ սոքա առանց խռովելու միայն իրենց զգեստին տակէն սրինգ մը կը հանէին և կըսկսէին պարի եղանակ մը հնչեցնել։ Ձիերն այս ախորժելի երաժշտութենէն զրգռեալ՝ այնպիսի եռանդեամբ կը պարէին՝ որ ձիաւորք ընդդէմ իրենց անհնարին ջանից՝ չէին կրնար այլ ևս զիրենց սանձել, և կըստիպուէին հաշտութիւն խնդրել։

Ուրիշ օրինակ մ'ալ կու տայ մեզ 'ի Տարմըշգառ քանի մը տարի բնակող նշանաւոր երաժիշտ մը։ Սա Մաքս անուամբ շուն մ'ունէր, որ տեղւոյն երգեցողաց և երաժշտաց սարսափն էր։ Վասն զի երբ սիւսլ ձայն մը կամ նօդ մը լսէ՞ իսկոյն ամենայն սաստկութեամբ կըսկսէր հաջել, և այս իւր ունակութեան մէջ բնաւ չէր սխալեր։ Թէ՛ երգիչք և թէ՛ երգչուհիք շատ կը վախէին երբ 'ի թատրոնն երգած ժամանակնին՝ առաջին կարգի նստարանի մը վրայ բազմած երաժիշտ ախորժ քով կը տեսնէին իրենց տարւորինակ և անախորժ դատաւորը։ Տէրը, որ ամէն առաջին ներկայացմանց անպակաս կը գտնուէր, թատրոնին տեսչին մտերիմ բարեկամն էր։ Իւր շունը ոչ մէկուն ազդեցութեան կը հպատակէր. երբ սիւսլ ձայն մը լսէր՝ այնպէս զարհուրելի կը հաջէր, որ բոլոր թատրոնը կը հնչեցնէր։ Վերնաբամբ մը վերջապէս այնչափ յուսահատեցաւ՝ որ չուզեց երգել մինչև որ շունը դուրս չհաննէ։ Բայց հասարակութիւնը որ միշտ վարժած էր տեսնելու զՄաքս և իւր ընկերն, չընդունեցաւ այս պայմանը, և վերնաբամբն բատիպուեցաւ հաւատարապէս երգել 'ի ներկայութեան այս զաւրմանալի շան։

Մեծաւ շնորհակալութեամբ ընդունեցամք ազգիս համրածամօթ Վլադսլավովն և սրամիտ քննադատ՝ Պերմ Պոռշեանցի՝ հետևեալ գործերը. Ա. Հոյն Խնդիր՝ Դոյն Վիգամանովեան. — Շահէ. — Սո և Վերդիեր. — Կոստանով. — Յեյն. — Բարի, գորս մեծ. հեղինակն իւր կողմէն ուզած էր մոլորել Մատեմադաբանին Ուխտիս Մխիթարայ։